ՏԵՂԵԿԱՆՔ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն մարզի վարչական սահմանում նախատեսվող գործունեության հասարակական լսումները և մարզպետարանի բնապահպանության բաժնի կողմից կազմակերպվող միջոցառումները հիմնականում անց են կացվում մարզպետարանի նիստերի դահլիճում և ազդակիր համայնքներում: Տվյալ միջոցառումներին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ԶԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ: Այդ միջոցառումների ընթացքի և արդյունքների վերաբերյալ նյութերը հրապարակվում են մարզպետարանի պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան էջում, «Լոռու մարզ» թերթում և լրատվական այլ միջոցներով: Տվյալ ձևաչափը հնարավորություն է տալիս հաշվի առնել ՀԿ-ների և հանրության տեսակետները, բողոքները ու առաջարկությունները:

Նշենք 2019թ. ընթացքում իրականացված առավել կարևոր միջոցառումներից մի քանիսը.

- Ընդերքօգտագործման և շրջակա միջավայի պահպանության վերաբերյալ հասարակական լսումներ:
- Կոշտ կենցաղային թափոնների արդյունավետ կառավարմանը նվիրված քննարկումներ:
- «Հայաստանի արտադրական լանդշաֆտների կլիմայի փոփոխության նկատմամբ տոկունության հզորացում» ծրագրի նախապատրաստման աշխատաժողով:
- Ընթացքի մեջ է «ՀԿ Կենտրոն»-ի կողմից իրականացվող «Համայնքային էկոտուրիզմը որպես կայուն ապրուստի միջոց Թումանյանի տարածաշրջանում» ծրագիրը: Ծրագրի նպատակն է նպաստել Դսեղի, Դեբեդ, Վահագնի և Ձորագյուղ համայնքների տեղական բնակչության անտառից կախվածության նվազեցմանը՝ էկոտուրիզմի ներուժի օգտագործման և էկոկրթության միջոցով: Ծրագրի ֆինանսավորումը կազմել է շուրջ 71 հազ. ԱՄՆ դոլար:
- «ՀԿ Կենտրոն»-ի կողմից իրականացվել է նաև գյուղական բնակավայրերում տուրիզմի զարգացմանն ու էներգիայի խնայողաբար օգտագործմանը նվիրված ծրագրեր: Իրականացված ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 19 մլն. դրամ:
- Վանաձորի քիմիական գործարանի թափոնակուտակիչի պարունակությանն և գործարանում պահվող մեծ քանակով թունավոր նյութերի (ծծմբական թթու, սնդիկ, ամոնիակ և այլն) պահպանությանը նվիրված հնդիպում-քննարկում:
- «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագրի հանդիպում-քննարկում, խորհրդատվական խորհրդի նիստ:
- 2016-2019 թթ. «Կովկասում և Կենտրոնական Ասիայում կայուն անտառկառավարման հաշվետվողականության համակարգ» ներուժի ամրապնդմանն ուղղված ծրագրի շրջանակներում կայանալիք Հայաստանում կայուն անտառկառավարման չափորոշիչների և ցուցանիշների վերաբերյալ երկրորդ ազգային աշխատաժողով:
- «Աղտոտված շրջակա միջավայրի ազդեցությունըԼոռու մարզի բնակիչների առողջության վրա» համաժողով:
- Շրջակա միջավայրին և մարդու առողջությանը նվիրված մի շարք այլ միջոցառումներ ու քննարկումներ:

ՄԱԶԾ-ԳԷՀ «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ծրագրի շրջանակներում համագործացելով ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հետ Վանաձոր և Ալավերդի քաղաքներում կազմակերպել և անց է կացվել «Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև բնական ռեսուրսների կառավարման ոլորտում ներգրավված մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար բնապահպանական ոլորտում վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել են շուրջ 70 շահառուներ:

Քննարկվել և համապատասխան առաջարկություններ են ներկայացվել բնապահպանական օրենսդրությանը վերաբերվող մի շարք նախագծերի վերաբերյալ:

Մարզի գործող բնապահպանական ՀԿ-ներում անց են կացվել բնապահպանական դասընթացներ, սեմինարներ, հասարակական լսումներ, հանրային քննարկումներ և այլ միջոցառումներ:

Բնապահպանական ՀԿ-ները համագործակցում են տարբեր միջազգային կառույցների, ԶԼՄ-ների, ՀԿ-ների, ՏԻՄ-երի, բիզնես սեկտորի և այլ շահագրգիռ կառույցների հետ՝ շեշտը դնելով առաջնահերթ բնապահպանական խնդիրների ֆունդամենտալ լուծումների և էկոլոգիական անվտանգության կարևորության վրա:

Բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքների արդյունքները վկայում են, որ տեղի է ունեցել հասարակության և պետական լիազոր մարմինների երկխոսություն, որի արդյունքում ընդունվել են երկկողմանի համադրելի որոշումներ, ինչպես նաև բարձրացել է հասարակության և ՀԿ-ների իրազեկության և որոշումների ընդունմանը մասնակցության մակարդակը:

Նախատեսվում է մարզպետարանի կայքէջի կամ այլ ինտերնետ ռեսուրսի օգնությամբ ստեղծել մարզի բնապահպանական խնդիրների լուծմանը նվիրված դիսկուսի հարթակ, որտեղ տարբեր շահառու կառույցների և անհատների կարծիքները և առաջարկվող լուծումները կքննարկվեն ու համատեղ կընտրվի խնդրի լուծման լավագույն տարբերակը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի անտառտնտեսությունների տարածքներում 2019թ. ընթացքում իրականացվել է.

- 67 հա անտառտնկում,
- 28 հա նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների ագրոտեխնիկական խնամք,
- 4 հա լրացում,
- 3 հա անտառմշակույթների խնամք խոտհունձի միջոցով,
- 1.18 հա տնկարանների գարնանային ցանքս և խնամք,
- 1.7 հա տնկարանների աշնանային ցանքս,
- 9.53 կմ ցանկապատում,
- Վանաձորի և Ստեփանավանի անտառտնտեսությունների տարածքներում 160 հա կոճղաշիվային վերաճի օժանդակության
- UNDP ծրագրով Վանաձորի անտառտնտեսության տարածքում 40 հա կոճղաշիվային վերաճի օժանդակության և ստեղծված հարթակներում 408.2 հա սերմերի ցանքսի աշխատանքներ:

2019թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ են իրականացվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի անտառտնտեսությունների 231 հա անտառներում և անտառային հողերում:

Թեղուտի անտառվերականգնման ծրագրի շրջանակներում 2015-18թթ. ընթացքում Շնող համայնքում իրականացվել են 31 հա պտղատու այգիների հիմնման աշխատանքներ: 2019թ. իրականացվել է 14 հա պտղատու այգիների մշակում և լրացում ու տրամադրվել սեփականատերերին: Ծրագրի արժեքը կազմել է 33 մլն. դրամ: 2020թ. նախատեսվում է ևս շուրջ 31 հա պտղատու նոր այգիների հիմնում (64մլն. 888 հազ. դրամ):

2019թ. ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում իրականացրել է.

- անտառտնկման աշխատանքներ 72 հա մակերեսով համայնքային տարածքներում: Ընդհանուր առմամբ մարզում անտառվերականգնման ծրագրի կողմից տնկվել է շուրջ 220 000 տնկի:
- նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ:
- համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում մարզի համայնքներին ու տարբեր կազմակերպություններին ծառատունկի համար տրամադրել է տնկիներ:

Հիմնադրամը մարզում իրականացնում է նաև տարաբնույթ բնապահպանական ուսուցողական դասընթացներ, անվճար հիմունքներով համայնքներին է տրամադրում պտղատու և դեկորատիվ տնկիներ:

Լոռու մարզպետարանի բնապահպանության բաժնի հետ համագործակցության արդյունքում «Մայ Ֆորեստ Արմենիա» բարեգործական բնապահպանական ՀԿ-ն Լոռու մարզի Գուգարք և Դեբեդ համայնքներում հիմնել է անտառային կուլտուրաների տնկարաններ (համապատասխանաբար 3 հա և 1.5 հա), հետագայում մարզում անտառտնկման աշխատանքներ իրականացնելու համար, ինչպես նաև աշխատանքներ են տարվում համայնքների հետ 2020թ. անտառտնկման համար անհրաժեշտ համապատասխան տարածքներ տրամադրելու համար:

Ընդհանուր առմամբ 2019թ. ընթացքում մարզում իրականացվել է շուրջ 303 հա անտառտնկման, ինչպես նաև նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ: Իրականացվել են նաև նախկինում կառուցված ցանկապատի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ:

Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ մշակվում և պարբերաբար անց են կացվում «Անտառների հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով շտաբային ուսումնավարժություններ:

Ընթացքի մեջ է ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում 2019թ. ընթացքում Լոռու մարզում իրականացվել է.

- ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի հետ համատեղ ծրագիրը դրամաշնորհ է տվել «Լոռու ուսանողների միավորում» ՀԿ-ին Լոռու մարզի Ձորագյուղ համայնքում էներգարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման ծրագիր իրականացնելու նպատակով, մասանավորապես գյուղի նախակրթարանում տեղադրվել է 5 կՎտ արևային կայան և 300 լ տարողությամբ արևային ջրատաքացուցիչ: Գյուղի դպրոցում տեղադրվել է 10 կՎտ արևային կայան և 200 լ տարողությամբ արևային ջրատաքացուցիչ: Նույն ծրագրի

շրջանակներում Վահագնի համայնքի բնակիչներին կտրամադրվի 95-100 հատ փայտի էներգաարդյունավետ վառարաններ:

- Լոռու մարզի Մարգահովիտ և Գուգարք համայքներում իրականացվել է դեգրադացված արոտավայրերի հասանելիության բարձրացման ծրագիր, որի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները և ներդրումները.

Մարգահովիտ համայնքում.

- ✓ մշակվել են համայնքի 35 հա անմշակ վարելահողերը՝ դաշտավարական կերարտադրության համար
- ✓ համաֆինանսավորմամբ համայնքին տրվել է տրակտոր, 3 կորպուսանոց գութան, խոտհնձիչ, մամլիչ հակահավաք, ինչպես նաև դիզելային վառելիք
- ✓ վերականգնվել է 10 հա դեգրադացված արոտ Շորի թալա հանդամասում
- ✓ համայնքին տրվել է սերմախառնուրդ, պարարտանյութ և դիզելային վառելիք;

Գուգարք համայնքում.

- ✓ մշակվել է 15 հա անմշակ վարելահողեր՝ դաշտավարական կերարտադրության համար
- ✓ համաֆինանսավորմամբ համայնքին տրվել է տրակտոր, 3 կորպուսանոց գութան, խոտհնձիչ, ինչպես նաև դիզելային վառելիք
- ✓ վերկանագնվել է 10 հա դեգրադացված արոտ Սարի գլուխ հանդամասում
- ✓ համայնքին տրվել է սերմախառնուրդ, պարարտանյութ և դիզելային վառելիք:

- Ընթացքի մեջ է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավանի, Տաշիրի, Ջիլիզայի անտառտնտեսությունների (28817 հա ընդհանուր մակերես) կառավարման պլանների պատրաստումը, որը կներառի նաև Գյուլագարակի «Սոճուտ» դենդրոպարկը (2576 հա): Աշխատանքների ընթացքում անտառտնտեսությունների և հարակից համայնքների միջև սահմանները ճշգրտվելու են արդեն ձեռք բերված բարձր լուծաչափի արբանյակային պատկերների հիման վրա: Իրականացվելու է մոնիթորինգ՝ դաշտում սահմանազատման գործողությունների ուղղությամբ: Անտառկառավարման պլանների նախագծերում ներառվել են կենսաբազմազանության, ածխածնի և էկոհամակարգային ծառայությունների հավելվածները:
- Ստեփանավանի «Լոռե փրկարարական ջոկատ» ՀԿ-ի համար ձեռք է բերվել բազմասպեկտրալ լուսանկարահանող սարք, որը մոնտաժվել է նախորդ տարի ձեռք բերված դրոնին և թույլ է տալիս իրականացնել Ստեփանավանի և հարակից տարածքների անտառների մոնիթորինգի աշխատանքներ՝ անտառային հրդեհների, ապօրինի անտառօգտագործման կանխարգելման նպատակով:
- ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի հետ համատեղ ծրագրի Հայաստանի Մանուկներ Հիմնադրամին (COAF) տրված դրամաշնորհի շրջանակներում COAF-ի «Սմարթ» կենտրոնի տարածքում հիմնվել է փորձարարական տնկարան, իսկ Դեբետ և հարևան համայնքների շուրջ 80 տնտեսությունների տնամերձերում ներդրվել է հատապտուղների (ազնվամորու)

մշակումը՝ որպես տեղի բնակիչների համար եկամտի այլընտրանքային աղբյուր և շրջակա անտառների վրա ազդեցության թուլացման միջոց:

- Մեծ Պարնի համայնքի բրիկետավորման համալիրի համար ձեռք է բերվել ունիվերսալ աղաց՝ ծղոտի և խոտի աղալու և բրիկետավորման հումք ստանալու նպատակով:
- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի անտառտնտեսությունների 1305 հա անտառային տարածքներում իրականացվել են բնական վերաճի օժանդակման աշխատանքներ:
- 2019թ. նոյեմբերից «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի Վանաձորի, Լալվարի, Տաշիրի, Ջիլիզայի և Ստեփանավանի անտառտնտեսություններում իրականացվում է 850 հեկտար դեգրադացված անտառների վերականգնում՝ հանքայնացման և սերմերի ցանքսի (600 հա) և կոճղաշիվային վերականգնման (200 հա) միջոցով: Աշխատանքները ընթացքի մեջ է:
- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավան, Տաշիր և Ջիլիզա անտառտնտեսությունների համար ձեռք են բերվել դաշտային համակարգիչներ (TDC 100) և գլոբալ տեղորոշման համակարգեր (GPS), որոնք կարճատև ուսուցումից հետո կտրվեն անտառտնտեսության աշխատակիցներին՝ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ընթացքի մեջ է «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից էկոհամակարգերի կայուն կառավարում և համայնքային կարողությունների զարգացում» ծրագիրը: Ծրագրի հայեցակարգում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության 3 մարզ, այդ թվում Լոռու մարզը՝ Մարգահովիտ և Ֆիոլետովո բնակավայրերով: Լոռու մարզում իրականացվող ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 79 մլն. 752.6հազ. դրամ:

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում Մարգահովիտ համայնքում իրականացվել է Մարգահովիտի համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (ջրատեղի, արոտ տանող դաշտամիջյան ճանապարհ) կառուցապատման և վերանորոգման աշխատանքներ: Իրականացված աշխատանքների արժեքը կազմել է 6 մլն 928.9 հազ. դրամ, որից համայնքի համաֆինանսավորումը կազմել է 2 մլն. 356.2 հազ. դրամ:

ՀՀ պետական բյուջեի կողմից 2017-2019թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

հազ. դրամ

Հ/Հ	Խոշորացված համայնքներ	Տարիները			
		2017	2018	2019 նախա-տեսված	2019 իրակա-նացված
1	Ալավերդի	57 815.6	170 268.75	100 467.39	76 266.4
2	Օձուն	49 857.3		28 470.4	27615.6
3	Ախթալա	1 874.3			
4	Շնող	2 120.0			
Ընդամենը Լոռու մարզ		111 667.2	170 268.75	128 937.79	103882.0

2019թ. Ալավերդի խոշորացված համայնքում նախատեսվել է իրականացնել 100 մլն. 467.39 հազ. դրամի աշխատանքներ: Մրցույթների արդյունքում գումարը կազմել է 96մլն. 217.84 հազ. դրամ: Տնտեսումը կազմել է 4 մլն. 218.95 հազ. դրամ: 2019թ. ընթացքում իրականացվել է 76 մլն. 266.4 հազ. դրամի աշխատանքներ: Մնացած 20 մլն. 161.3 հազ. դրամի աշխատանքներն ընթացքի մեջ են և կավարտվեն 2020թ. ընթացքում:

Օձուն խոշորացված համայնքում նախատեսվել է իրականացնել 28 մլն. 470.4 հազ. դրամի աշխատանքներ: Մրցույթների արդյունքում գումարը կազմել է 27մլն 615.6 հազ. դրամ: 2019թ. ընթացքում իրականացվել է 27մլն 615.6 հազ. դրամի աշխատանքներ: